ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան « 25 » մարտի, 2020թ.

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

(ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **Լևոն Օհանյանի** վարույթում քննվող գործերով մինչև 31.03.2020թ.-ը ներառյալ նշանակված բոլոր ***նիստերը հետաձգելու*** մասին)

Հիմք ընդունելով Պարետի 24.03.2020թ.-ի թիվ 16 որոշումը, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում մարդկանց ազատ տեղաշարժվելու իրավունքի սահմանափակումը և անձանց պարտադիր ինքնամեկուսացման ռեժիմի սահմանումը, ինչպես նաև այլ անձանց հետ անմիջական շփումը սահմանափակելու և «COVID-19» տեսակի վիրուսի հնարավոր տարածումը կանխելու նպատակներից ելնելով՝

1. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Լևոն Օհանյանի վարույթում քննվող գործերով (բողոք, ընթացակարգ) մինչև 31.03.2020թ.-ը ներառյալ նշանակված բոլոր ***նիստերը հետաձգել***՝ ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ.-ի թիվ 600 հրամանի 15-րդ կետով սահմանված՝ ներգրավված բոլոր կողմերի՝ հրավիրված նիստերին մասնակցելու և իրենց տեսակետները, դիրքորոշումները և ապացույցները ներկայացնելու հնարավորության ապահովման համար:
2. Հաջորդ նիստի կայացման տեղի, օրվա և ժամի մասին հավելյալ ծանուցել ներգրավված կողմերին՝ ինչպես www.gnumner.am պաշտոնական կայքի, այնպես էլ՝ էլ. հասցեի միջոցով:
3. Նշանակված հրապարակումների նիստերն իրականացնել հեռավար/առցանց եղանակով՝ ի կատարումն Պարետի 24.03.2020թ.-ի թիվ 16 որոշման: *Նիստերին կարելի է առցանց հետևել https://www.e-gov.am/gnumner/ հղումով:*
4. Միևնույն ժամանակ իրազեկել, որ քննությանը ներգրավված անձինք հարցերի դեպքում կարող են դիմել gbqa_ohanyan@mail.ru էլ. հասցեով:
5. Սույն հայտարարությունը հրապարակել www.gnumner.am պաշտոնական կայքում և ուղարկել գործով ներգրավված կողմերի էլ. հասցեին:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**

Հեռ. (+374) 11 28 93 25, Էլ.փոստ. gbqa_ohanyan@mail.ru